

կանութիւնը, խառնուածքն ու նկարագիրը, հետեւաբար կեանքի մէջ իր ընթացքը կախում ունին իր կազմուածքէն՝ որ ծնած օրէն իսկ եւ աւելի առաջ, արդէն հաստատուն ու գրեթէ անփոփոխելի է իր ընդհանուր գիծերուն մէջ, եւ երբ գիտութիւնը դայ հաստատել աստեղային ուժերու ուղղակի ազդեցութիւնը մարդու կազմուածքին վրայ — մանաւանդ կազմաւորութեան շրջանին, — միաժամանակ հաստատուած կ'ըլլայ աստղերու ազդեցութիւնը մարդկային ճակատագրին վրայ: ... Պէտք է հիանալ, որ՝ առանց այն գիտական հրաշալի միջոցներուն, զորս այսօր մեր արամադրութեան տակ ունինք, մեր նախնիք տիեզերական շատ մը մեծամեծ խորհուրդներու յայտնատեսութիւնն են ունեցեր, եւ անոնց ցնորական տեսութիւնները յաճախ դարձեր յետագայի սովորական իրականութիւնը»:

Հայ ժողովրդեան կարծիքով³³ ամէն մարդ աստղ մ'ունի. երբ անոր վախճանը դայ, այդ աստղը կ'իյնայ եւ մարդը 40 օր յետոյ կը մեռնի: «Բոլոր աստղերն երկու տեսակ են լինում, բարի եւ չար: Բարի աստղի տակ ծնածը՝ երջանիկ, չարին տակ ծնողը դժբախտ է լինում: Աստղերը կարող են դժբախտութիւն, իմաստութիւն տալ մարդկան»³⁴: Այս հաւատքը կայ Ջաւախքի, Վարանդայի, Համազնի, Գանձակի, Տարօնի եւն մէջ: Բորչալուցիներու համաձայն ամէն նորածինի համար նոր աստղ մը կը ստեղծուի: «Թլուստ Դաւիթ³⁵» Հայ ժողովրդական զեւրազներու գութեան մէջ՝ Մըսրայ Մելիքի մայրը իր որդւոյն կ'ըսէ՝ զայն Սասնոյ զեւրազին դէմ կուռելէ ետ կեցնել ուղեւով:

«Մելիք, մի՛ էրթայ էն կօշախի վերայ՝
Մէկ էրազ իմ տիհիլ՝
Էրազըմի զահահուրիմ իմ»:

³³ Ազգագրական Հանդէս, Ա, 308, 348. Բ, 219. 2, 34, 346. IX, 269—271. X, 166. XVII, 95 եւն. Abeghian, Der armenische Volksglaube, Leipzig 1899, էջ 25: Ա. Տ. Կ. Գալփասան, Չօմախլու, Նիւ Եորք, 1930, էջ 36:

³⁴ «Գիւմիւրդեցի մի հովիւ մըսում է. տանում են տուն. ճանապարհին մի քարի փոսի մէջ հաւաքուած ջրից խումւմ է: Գիշերը երազում յայտնում են, թէ դու սրբացար, որովհետեւ խմեցիր ժաշուրը, որի մէջ զարկել էր աստղը: Մի եւ նոյն ժամանակ արդեւում են նրան ամուսնանալ: Սա ժամկոչ է գտնում եւ ամէն ինչ դուշակում: Մինչ իսկ պատկուհի է գերեզմանների մօտ եւ իմանում, թէ ննջեցեալները քրիստոնէսայ են եղած թէ կոսապալա»:

³⁵ Անդ, 2, էջ 174:

Գիշեր էրազի մէջ որ տիհայ՝
Սասընայ աստղայ լիւս-պայծառ էր,
Մըսրայ աստղայ մութ-խաւար էր»³⁶:

Ձէնով Օհան³⁷, նոյն զեւրազներգութեան ուրիշ մէկ հերոսը, որ աստղադուշակ է, «Իրիչկից, Դաւթի աստղ տեսաւ՝ նվազ էր, խիւանդ էր», ուստի կ'եզրակացնէ թէ «Դաւթի նեղ տեղ ի ինկի»: Շնորհալի³⁸ իր «Յաղագս երկնից» դործին մէջ կը նկարագրէ երկինքն ու եօթը մոլորակներու համար կ'ըսէ.

«Ոմանց բարի ասեն գիտողք եւ խոստանան,
Այլոց զչար թէ լինիցի խօսին զբան.
Է զի կատարի, է զի սխալող բարբառեցան»:

Սրուանձտեանց³⁹ իր «Մանանային մէջ յառաջ կը բերէ սա կտորները. «Թէ որ մէկը կը ծնանի այն վայրկենին, որ Ազեղնաւորին Առաջին աստղը Լուսնթաղին հետ մէկ տեղ հորիզոնէն վեր կ'ելլէ, զեւրազն ու թագաւոր լինի նա: Թէ որ մէկը Խեցեալին կենդանակերպին մէջ ծնանի, վատ լինի. ինչ բանի ձեռք զարնէ, ետ մնայ: Ով որ Խոյին մէջ ծնանի, մեծատուն լինի: Ով որ առիւծին մէջ ծնանի, կտրիճ եւ իշխան լինի, նաեւ կուռող եւ բարկացող: Ով որ կշիռին մէջ ծնանի, արգար եւ բարի լինի: Ով որ Այծեղջ(իւր)ին Արեւուն հետ հորիզոնէն վեր ելլելու ատենը ծնանի, անոր բախտ հետզհետէ մեծնայ եւ բարձրանայ: Երջանիկ է այն ժողովուրդը, որոյ թագաւորն ծներ է Կշիռ կենդանակերպին մէջ: Վա՛յ այն ժողովրդեան, որոյ թագաւորը ծներ է Կարիճ չար կենդանակերպին մէջ»: Ինչպէս կը տեսնուի այս հաւատքը եզ-

³⁶ Մելիք, մի երթար այդ քաջին դէմ.
Մէկ երազ եմ տեսեր,
Երազիս մէջ զարհուրեր եմ.
Գիշեր երազի մէջ որ տեսայ՝
Սասունի աստղը լոյս պայծառ էր,
Մըսրի աստղը մութ խաւար էր:

³⁷ Անդ, էջ 190—191:
³⁸ Բանք Զափաւ. Յաղագս երկնից. Վենետիկ 1830, էջ 283:

³⁹ Մանանայ, Կ. Պոլիս 1876, էջ 337—338: Ինչպէս որ այս տեղիքին յայտնի է, առիւծը զօրութեան, իշխանութեան եւ բարկութեան խորհրդանշան է: «Երբ արեւն իր ընթացքն առիւծին մէջէն կ'ընէ, այդ միջոցին աւելի ուժգին ազդեցութիւն մը ունի. եւ այս անոր համար չէ՛, որ արեւն այն ժամանակ մասնաւոր մոգական ոյժ մը կը սփռէ... այլ որովհետեւ արեւը առիւծի քով եղած ատեն շատ ուղղաձիգ կը նետէ իր ճառագայթները երկրի վրայ ու ասով իր քնական ազդեցութիւնը գերազանց աստիճանով կը ներգործէ: Jakob Aebly, Astrologie als kosmische Symbolik und Periodik. «Der Leuchter», Darmstadt, IX. Band (1930—1931), I. Heft, էջ 127:

նիկի ներկայացուցածին հետ գրեթէ նոյն է. Խոյը հարստութիւն կը շնորհէ, առիւծը՝ իշխանութիւն եւ թագաւորութիւն, իսկ կարիճը՝ դժբախտութիւն ու չարիք:

Մի եւ նոյն հաւատալիքները գրեթէ նոյնութեամբ կը գտնենք նաեւ ուրիշ ազգերու քով: Աւեստայի⁴⁰ համաձայն, ամէն բարի եւ չար բան, որ մարդկան եւ միւս արարածներուն կը հանդիպին, 12 ախտարներէ եւ 7 ապախտարներէն յառաջ կու գան (12 կենդանակերպներն ու 7 մոլորակները): 12 ախտարները Որմզդի կուռակցութեան կը վերաբերին եւ բարի արդեւները յառաջ կը բերեն, իսկ ապախտարներն Ահրիմանի արբանակներն են եւ միայն չարիք յառաջ բերելու ետեւէ կ'ըլլան: Գիտէ՞ որ Սիկիլիացի⁴¹ քաղաքացիներու մասին կը գրէ՝ թէ կը հաւատան, որ մոլորակներու ընթացքին մէջ 30 աստղներ կան, իբր խորհրդատուներ. անոնց կէսը դէպ ի երկիր կը նային. միւսները երկրի խորքը (սանդարամետը) կը նկատեն, եւ ասով հոն եղածները կը տեսնեն ու անոր համաձայն որոշումներ կ'ընեն: Բաց աստի կան 24 աստղներ, որոնց 12ը կենդանի մարդկան վրայ կը հսկեն եւ 12ը մեռելներուն վրայ ու զանոնք կը դատեն: Վիրգիլիոսի⁴² Մշակականքին մէջ կը կարդանք թէ մարդիկ չեն մեռնիր, այլ կը թռչին կ'երթան աստղներու մէջ կը բնակին: Հոմարայեցիներու աստղապաշտութեան մասին Ս. Օգոստինոս Երկար գլուխներ նուիրած է իր «Վան Բաղաքին Աստուծոյ»⁴³ երկին մէջ: Հոմարայեցիներու համաձայն, աստղները ո՛չ միայն մարդիկներու բախտին ու ճակատագրին վրայ որոշիչ ազդեցութիւն ունին, այլ նաեւ անոնց գիրքէն ու երեւոյթներէն կարելի է իմանալ, թէ ծնանիլիք կենդանի մը ինչպիսի՛ պիտի ըլլայ, արդեօք ասորաբեր, արօրածիգ, կառածիգ են:

Աստեղահմայութեան բուն հայրենիքը Եփրատ-Տիգրիսի հովիտն է: Եւ այս պարագան արդէն մեծապէս ազդած է, որ ասորաբարեկական քաղաքները ամենհի հոսանքով խուժէ երկրէն դուրս եւ ողողէ դրացի աշխարհները: Անուրանալի է, որ հայ ազգը ո՛չ միայն այս տեսակէտով, այլ նաեւ ուրիշ քաղաքակրթական մեծ ազդեցութիւններու են-

⁴⁰ Spiegel, անդ, II, էջ 74:
⁴¹ Orelli, անդ, I, էջ 221:
⁴² Georgica, IV.
⁴³ V, 1—9:

թարկուած է իր այս քաղաքակրթ դրացիներէն: Եւ հայ ազգը մին է այն սակաւ ազգերէն, որ իր վաղնջականութեան պատճառով հնագրական քաղաքակրթութեան մը մնացորդները հասցուցած է մեզի. եւ այդ մնացորդներուն մէջ մասը՝ մեռած ազգի մը, ասորաբարեկացիներու, սեպհականութիւնն է: Ինչ որ Կիւմոն իր մեծ հեղինակութեամբ ասորիներու մասին կը գրէ, նոյնը նաեւ հայերու մասին կրնար ըսել. «Քաղաքական աշխարհաբանութիւնը (cosmologie), որ ամէն տարր կ'աստուածացնէ, եւ մանաւանդ աստղներուն գերազանց ազդեցութիւն մը կը վերաբերէ, կը տիրապետէ ամբողջ ասորական ընտրակրօնքի (Syncretismus) վրայ. Տիեզերքն հսկայ գործարան մը կը նկատէ, որուն իւրաքանչիւր մասը, իրարու հետ սերտօրէն կապուած, կ'ազդէ ու կը հակազդէ իրարու վրայ: Ուստի աստուածութիւնը կրնայ — ինչպէս հին սեմականները կը հաւատային — ջուրի, շանթի, քարի կամ բուսականութեան մէջ մարմնացած մտածուիլ: Բայց ամենազօրեղ զեւրազն համաստեղութիւններն ու մոլորակներն են, որոնք ժամանակի եւ իրերու ընթացքը կը վարեն»:

(Շարտունակչի.) Ն. Ա. ԳԱՐԱՄԱՆԵԼԻՆ



ՆԻԹԵՐ ՂՈՐՈՐԱԿ ՀՈՅ ԱԶԳԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Համախց
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՄ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ
ա. Աչխաղալի համար:

1. Չուն կտորում են սպիտակուցը միջից հանում, իսկ գեղնուցը մէջը թողնելով բամբակով ծածկում եւ այնքան հարում, որ նրա իւրը պատում է բամբակին, որը դնում են աչքի վրայ:
2. Նոր մորթած ոչխարի սպիտակ թուփ (փախաչը) մի կտոր դնում են աչքին եւ պահում որ արիւնը քաշի:

⁴⁴ Franz Cumont, Die orientatischen Religionen im römischen Heidentum. Nach der vierten französischen Auflage, unter Zugrundelegung der Übersetzung Gehricks bearbeitet von Dr. B. A. Burckhardt-Brandenburg, 3. Auflage, Leipzig und Berlin, 1931, էջ 122.

3. Աղջկամօր կաթը կաթեցնում են աչքի մէջ կամ թէյի ջուր:

4. Աչքի ջուրը եթէ գնում է, ձմերուկի կեղեւը այրի աչքին քաշի նրա փոշին:

5. Աչքի ջուրը եթէ գնա ամբամբ գուրապով հարի. եօթն օր աչքին քաշի ջուրը կը կտրի:

6. Աչքը եթէ ծովի, նապաստակի լեղին բամբակով թրջի, մի քանի անգամ աչքի վրայ դիր:

7. Աչքը ցաւելուց նշաղիրը մեղրի մէջ հալեցուր, պարզեցուր երեկոյեան եւ առաւօտեան քսիր:

8. Աչքի կոպին մազ դուրս դալուց կոպը շուռ տուր, տեղը մաքրիր, կանաչ դորտի արիւն քսիր կամ շանաճանճի արիւն կաթեցուր, էլ մազ չի բռնիր:

9. Աչքի լոյսը պակասելուց վայրի դեղձը չորացրու, ձեծիք քաթանով աչքին քաշիր, կը պայծառանայ:

10. Աչքի ջուրը գնալուց, կաքաւի լեղին աչքին կաթեցրու:

11. Աչքի հին ցաւի համար մանուկ տղայի շուր ամանում եփում են մինչեւ թանձրանում է, յետոյ վերցնում չորացնում են, հարելով մանրացնում ալրափոշու պէս, քիչ դափտան, մի քիչ էլ մուշկ հետը խառնում աչքին քաշում:

12. Աչքի լոյսը պակասելուց ճերմակ աքլորի լեղին աղջկամօր կաթով միաշափ խառնում են, բամբակով գնում աչքերին:

13. Աչքի կոպի մազերը վեր դալուց մեղր են քսում, մազը դալիս է:

14. Աչքի արիւնի դէմ գափոռանի ծաղիկը, վարդի իւղը, ձուի դեղնուցը իրար խառնում են թղթի վրայ քսում աչքերին գնում:

15. Աչքը ցաւելուց շաքարը կաթով շաղախի, բամբակով վրան դիր:

16. Եթէ աչքը սպիտակ լինի, նապաստակի լեղին տրորի աչքին քաշիր:

17. Աչքի արիւն լինի եւ ցաւի, ոչխարի անգամի միսը դիր աչքին 3-4 օր, կը քաշի:

18. Աչքը ցաւելուց, ցուրտ ջրով չլուանալ, միայն տաք ջրով, վերցնել ձուի սպիտակուց հարել մինչեւ նրա իւղը դուրս կու գայ, յետոյ քարի վրայ շիբի հետ խառնած հարել եւ բամբակի վրայ դրած աչքին կապել եւ այս կրկնել մինչեւ կը լաւանայ:

19. Աչքացաւի դէմ խոնուտի արմատը

կտրում են, միջի կաթը հանում աչքին կաթեցնում:

բ. Ականջացաւի համար:

1. Խորոված սոխի միջի դուրակը հանել, ախանջը կոխել:

2. Ակնամոմը (փեթակին կպած մոմը) կակղացնում են, սրածայր շինում կոխում ախանջը:

3. Ականջահալուց ջուր են կաթեցնում ախանջի մէջ:

4. Ճերմակ սոխի ջուրը ախանջի մէջ կաթեցրու:

5. Սոռուկի սերմը ձուածեղ արա, գլխին դիր:

6. Աղուէսի իւղ կաթեցրու:

7. Ծառի իւղ դիր, ցաւը, կը կտրի:

8. Խոտուկի ձուի դեղնուցի իւղը ախանջի մէջ կաթեցրու. տաք տեղ պահիր ցաւը կը կտրի:

9. Ականջը չլսելուց ճերմակ նաւթ կաթեցնել մէջը:

10. Ականջից եթէ դեղին ջուր գնա, սոխը ձեծիք ախանջի մէջ կաթեցուր:

11. Ականջը խլանալուց նուրը խորովի, ջուրը տաք տաք մէջը կաթեցուր:

12. Ականջը չլսելուց քացախը անիր մի փոքր ամանի մէջ, եփ տուր եւ ախանջը նրա դուրջուց վրայ պահիր:

13. Եթէ ախանջը վաղուց խլացած է, մրջիւնի ձուերը հաւաքել բոխը ձեծել, ջուրը քամել, մրջիւնի ձուն խառնել, բամբակով ախանջի վրայ դնել, կապել:

գ. Ատամնացաւի համար:

1. Խորոված չամիչը դնել վրան եւ երկու բոպէից հանել ուրիշը գնել:

2. Մարմարինը փշրել, քացախի հետ խառնել եւ բերանը ողողել:

3. Ցուրտ ջրով օրեկան մի քանի անգամ բերանը ողողել:

4. Ընկուղի միջուկը անցկացնել քորոցի ծայրին, կրակի վրայ պահել մինչեւ իւղը դուրս կը ձգի եւ գնել ատամի վրայ:

5. Կովի ոտը սյրել, մեղրի հետ խառնել փոշիացրած, շարժած ատամին քսել, կը պնդանայ:

6. Ատամը ժանգոտելուց, դարին այրել աղով խառնել ատամներին քսել, կը սպիտակի:

7. Չանջափիրը ատամի տակ դնես, ցաւը կը կտրի:

8. Թէ լնդերքից արիւն գնա եւ ատամը վայր ընկնի, լոշտակի ջուրը մեղրով խառնի, բերան առնի, մի ժամ պահի եւ վայր թափի:

9. Չիթով լոշտակը մհլամ արա դրսից վրան կապիր:

10. Թէ ատամն ցաւի, առ սեւ թթի մացառի կեղեւը 5 դրախմա եփիր, երբ կէսը կը մնայ խառնիր լոշտակի սերմին, ջուրը տուր բերանն առնի մի ժամ պահի եւ թափի, ցաւը կանցնի:

11. Ատամը ցաւելուց ճիթորենը քացախով եփի, բերանը առ ողջները կը կոտորի:

12. Եթէ ատամը ժաժ գայ, դաղձը դեղնով եփիր, բերանը առ պահիր կամ թթենու սրմառի կեղեւը ձեծիք, տրորիր եւ վրան դիր:

13. Աւելուկի տակը թեժ քացախով եփիր, բերանը առ:

14. Բողկի տերեւը չորացրու քսիր, ցաւը կը կտրի:

դ. Գլխացաւի համար:

1. Սեւ բողկը տափակ տափակ կտրել, դնել ճակատի վրայ, տաքութիւնը կը քաշի:

2. Քացախ քսել, եթէ սառուց լինի քացախը սառցնել լաւ կամ խունկ խառնել:

3. Քացախը հոտոտել տալ կամ քթախոտ քաշել:

4. Չուածեղ անել գլխին դնել:

5. Ճակատը տրորել:

6. Թառ հալիւ (իւղում բացարած ալիւր) դնել գլխին:

7. Եթէ աչքը կարմրի, երեսը տաքանայ, երակից արիւն առնել:

8. Առ չիրիկ ու բարկ քացախ հարիր, միառորուի գլուխը քունքը, ճակատը քսիր, բամբակով գազաթին դիր եւ ժամանակ ժամանակ փոխիր մինչեւ հովանալը:

9. Վերցրու շախաղողը կամ ջղախոտը 20 դրամ եւ վաղի տերեւ ձեծած, 10 դրամ խլար մանր ձեծած, 2 դրամ մանրիչակ աղած եւ 4 դրամ տուղտի տերեւ, դարու ալիւր 10 դրամ, ամենը խառնել քացախի մէջ կտաւով գլխին դնել:

10. Աղինջը ձեծիք, մածնով շաղախի գլխին դիր:

11. Սամիթը եփիր եւ նրա ջրով գլուխը,

քունքը, ճակատը օձիր եւ բամբակը թրջած դիր գլխին եւ փոփոխիր:

12. Եթէ գլուխը ցրտից է ցաւում, մանանիթը, սխտորը, պղպեղը կամ գանջափիլը իրար հետ խառնիր եւ գլխու մէջ հալած գլուխը քսիր:

13. Կտաւտը ձեծիք, մաղից անցրու, մեղր խառնած թող 3 օր խմի մասրով:

14. Բակլայի ալիւրը քացախի հետ խառնել, գլխին կապել:

ե. Արիւն գալուց:

1. Քթից արիւն գալուց, դաճը այրել դնել վրան, կապել:

2. Շրեշն եւ գլտորը թակել, քթին քաշել, կը կտրի:

3. Եթէ բերանից արիւն է գնում, սալորի տերեւը գլխու մէջ եռացնել, քիչ քիչ խմել: Թերխորով ձուն էլ օգնում է:

4. Բերանից եթէ արիւն գնա, բողկը եփիր, ուտեցրու:

5. Քթի արիւնը կանգնեցնելու համար քալուրը թէժ քացախով փրթա արա, դիր քթի մէջ, կամ դեղդաշը (պղնձարջասպը) ձեծել զամիչի միջոցով քթի մէջ սրսկել:

6. Եթէ դամարը կտրած լինի կամ մի տեղից արիւն գնա, ոչխարի թափանը դանակով լաւ քերի, չորացրու, ձեծիք, բոնոթու պէս քթին քաշիր, կամ որ տեղից արիւն է դալիս վրան կապիր:

7. Արիւն փոխելու դէմ խոզի աղը խառնել հիւանդի թքած արեան հետ, թարմ կարագ խառնել, տապակել, ուտացնել:

8. Ցուրտ ջուրը քթով վեր քաշել քթից արիւն գալուց: Շամայի սանրը փոշիացնել քթի մէջ քաշել:

9. Կտրած տեղի վրայ անձամ մաստաք կողցնել:

զ. Հագելուց:

1. Ուտեցնել խորոված խնձոր կամ սերկելի եւ նրանց միջի կուտը:

2. Ունարը խաշել ուտացնել:

3. Խորոված սոխ ուտացնել:

4. Խորոված նուռ ուտացնել:

5. Բիւնի արմատը խաշել, նրա ջուրը խմացնել:

6. Տուղտի ծաղիկը խաշել, ջուրը խմացնել:

7. Մանրիչակը եփել ջուրը խմացնել:

- 8. Մասուրի ապուր ուտացնել:
- 9. Չուրի դեղնուցը հարել թէյի հետ կամ տաք ջրի, խմացնել:
- 10. Ծնրփրփեաի ծաղիկը եփել, ալիւր շաղ տալ վրան, դնել որկորին:
- 11. Վերցնել կէս մսխալ դափուան, երեք Ֆինջան ջրի մէջ եփել, ինչպէս չայ շաքարով կամ մեղրով անօթի կամ երեկոյեան խմել:
- 12. Ըխալհալի (կոկիլուղի դէմ) սահլամ բոյսի (արմատը սպիտակ սոխի պէս) կաթի մէջ եփում են խմացնում:

Է. Փորացաւի համար:

- 1. Օղի կամ կոնեակ, ոտ խմացնել:
- 2. Թրճած աղիւսը տաքացնել շորի մէջ փաթաթած դնել փորի վրայ:
- 3. Գօտի կապել մի փայտի անցնել դօտու մէջ, ուրի այնքան որ փորը սեղմուի եւ այդ գրուեալով մի քանի բոպէ պահել:
- 4. Գինու մէջ ձեծած սեւ պղպեղ խառնել եւ տաքացրած խմացնել:
- 5. Մէջքին ցուրտ ջուր անել:
- 6. Լիերթնը խաշել, քամել, ջուրը խմացնել երեխաների փորացաւի ժամանակ:
- 7. Փորացաւի դէմ փշատի կճեպը եփել չայի պէս, մեղրով կամ շաքարով ինչքան կարենայ խմել. տաք լինի թէ ցուրտ վրաս չունի:
- 8. Փորի քամու դէմ չամանը եփել զինու մէջ, խմել:

Ը. Թարախակալ ուռեցի կամ չուրանի դէմ:

- 1. Գաղտիկուր բոյսը վերցնել, թքնել վրան եւ դնել ուռեցիին, նա թարախը դուրս է բերում:
- 2. Ոչխարի ոսկրի միջի ծուծը (իլիկը) ձեծել դնել վրան:
- 3. Ալիւրը խմոր անել, վրան շաքարի փոշի ցանել դնել ուռեցիի վրայ:
- 4. Սորոված սոխի դնել, կամ սոխը մանր կտրատել ընտիր սապոնի հետ խառնած ամանի մէջ կրակի վրայ այնքան տրորել, որ միանան, յետոյ դնել ուռեցիի վրայ:
- 5. Օրտուբաղի չիրը պատուել, միջից կիտել դնել վրան:
- 6. Կտաւատի խմորը դնել:
- 7. Խինդեղնի տակոին թակել, ջրովը շփոթ անել դնել ուռած տեղի վրայ քանի որ թարախահարած չէ:

- 8. Ուռեցը նստեցնելու համար ցորենը ծամում են լորձուների հետ խառն քսում:
- 9. Չուր ուռչելուց, բողկի ջուրը, կղրու ձուն գէյթունի իւղով խառնիր, քսիր:



ԿԱՐՆԵՑԻ ՍԵՐՈՎՐԷ ՎԱՐԳԱՊԵՏԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ՂՐԻՄԵՑԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԳԱՊԵՏԻՆ

(Շարունակութիւն տ. 11-րդ):

6.

Ձերդ Սրբազանութիւն:

Ողորմած Տէր:

Կառավարիչն մինխտրութեան հոգեւորական գործոց այլատու դաւանութեանց ի 25-ն Ապրիլի յայտնեաց ինձ զբարձրագոյն կամս նորին կայսերական մեծութեանն յաղագս փոխադրութեան Ներսէս արքեպիսկոպոսին ի վիճակն Բեսարաբիոյ եւ ընտրելոյ ձերդ սրբազնասրբութեան զկանդիլատս վասն վիճակացն Վրաստանի եւ Աստրախանայ խմոյս համաձայնութեամբ: Ընդ նմին ի միասին առաքեաց զպահարանս վասն հասուցանելոյ զայն առ սրբազնասրբութիւն ձեր:

Պատիւ ունելով առաքել ընդ այսմ զնշանակեալ պահարանն ընդ 652 համարովք, ամենախոնարհարար խնդրեմ՝ ձերդ սրբազնասրբութիւն, մի՛ զանց առնել ծանուցանել ինձ զկանդիլատացն, զորս ընտրել ունիջիք վասն կառավարելոյ զվիճակն Վրաստանի եւ Աստրախանայ:

Մատուցանել ձերում սրբազնասրբութեան զայս թուղթ, յանձնեցի ես բարձրորժանագատիւ Սերօբէ վարդապետին, որ ըստ իւրումն առաքինութեան, եւ ջերմեանդուրեան առ նորին կայսերական Մեծութիւնն՝ ապացուցանելոյ բազում փորձիւ, եւ ըստ այլոց բարոյական հանգամանաց՝ յայտնի է ինձ որպէս մարդ արժանաւոր: Տալով զպարտու պատշաճն ճշմարտութիւն նորին բարեպաշտութեան, թէ վաստակօք եւ թէ զօրանի բնաւորութեամբ՝ համարիմ թէ ըստ ամենայն ճշմարտութեան Սերօբէ վարդապետն արժանի է ձեռնադրել եպիսկոպոս,

եւ խառնել ի թիւ կանդիլատացն. զոր եւ յանձն առնեմ ի յատուկ բարեյարդութիւն եւ խնամակալութիւն ձեր, առ այն մանաւանդ, զի սրբազնասրբութիւն ձեր նախ քան զայս եւս աշխատ եղէք ի դատանել զհոլուպետս հմուտս եւ արժանաւորս:

Եւ այլով՝ յուսամ ես, թէ ընտրութիւն կանդիլատաց վասն նշանակեալ վիճակացն Վրաստանի եւ Աստրախանայ յառաջացի թելադրութեամբ հոգւոյն սրբոյ եւ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ձեզ հովանաւորողի:

Առաւելեալ վերապատուութեամբ եւ անձն ընծայութեամբ ունիմ պատիւ մնալ

ձերում սրբազնասրբութեան ողորմած հովուապետ ամենախոնարհ ծառայ

Գրաֆ Երեւանայ Իվան Պասկելիչ:

Թ. 1851:
Թիֆլիս, 1830, Մայիսի 1:

7.

Բարձրագատիւ Յօհաննէս վարդապետ Իմ մտերիմ եղբայր:

Առաքեցի զԳարաճով աստիճանաւորն իմ, որ է վաղածանօթ Ձեզ, եւ զմիւս ոմն, ի գնել մնաց: Տառապանք ժողովրդեանս մեծ է, եւ ես ջանամ փրկել զնոսա ի սովէ:

Սորհուրդ ետու Հոգեւոր ծնողի իմոյ հրամայել զի Աթոռայինք օգնական գտցին գործոց զոցա. գնոյն եւ ի Ձէնջ խնդրեմ առնել: Փութով ընդ Գարաճովին գրեցէք զՁէնջ:

Մնամ Ձեզ մտերիմ եղբայր Սերովբէ վարդապետ:

Ախլցխայ, 1830, Սեպտեմբեր 12:

Առ բարձրագատիւ Յօհաննէս վարդապետ:

Ատենադպիրն Ղրիմցի:
Ի Սուրբ Աթոռն:

8.

Բարձրագատիւ Յօհաննէս վարդապետ Իմ մտերիմ եղբայր:

Ընկալայ զվերջին գիր ձեր զոր յանձեալ էիք ընկերի ազնուական Կալաճովի բերել

ինձ: Ծնորհակալ եմ վասն տեղեկութեանց զոր տայք ինձ: Միայն ցաւիմ զի նորին Վեհափառ Սրբութիւնն փոքր ինչ զեղեալ է ի վիճակէ քաջատղջութեան, յուսամ թէ ցարդ վերստին զօրացեալ իցէ: Հոգւով չափ ըղձալի ինձ գալ ի Սուրբ Աթոռ, բայց զբարձունք իմ դեռ աստ ծովացեալ ընկղմեն զիս. ի ժամանակն ձեռնայնոյ այսուհետեւ ոչ գիտեմ թէ զիարդ կարացից ի ճանապարհ հանել դէպ առ Ձեզ. ճանապարհն յԱխլցիլէկայ ցիլիմրի վատթար է քան զիովկասեանն եւ զԻնչպատարեանն, զի չի՛ք յերկար խտրոցի անդ՝ ուրեք բնակութիւն ի մնալ զիւրայն եւն: Յուսամ նորին Վեհափառ Սրբութիւնն խնայեցէ ի կեանս իմ:

Խնդրանօք իմովք եհաս աստ քաղաքական Կուրեւնատորն ի 16 ամս. եւ զցայդ եւ զցերեկ մաշեմք ի կառավարել եւ ի պահպանել զգաղթականս մեր, որք գրեթէ՛ ի հասանել իմ յուսակտուր լեալ՝ կոտորէին եւ ցրուէին առ յոռի կառավարութեան տեղւոյս: Այժմ փրկութիւն եղեւ սոցա. եւ դեռեա բարեք կարգաւորութեամբ մերով հանդարտեցին եւ ծաղկեցին:

Գարձեալ փութով խնդրեմ գրել առ իս զհարկաւորաց եւ եմ

Եղբայր Ձեր Սերովբէ Արքեպիսկոպոս Աստրախանայ:

Ախլցխայ, 1830, Հոկտեմբեր 19:

Համար 34:
Ի Հոկտեմբեր 22 ստացայ:

9.

Բարձրագատիւ Յօհաննէս վարդապետ Իմ մտերիմ եղբայր:

Գարձ արարեալ յԱխլցխայէ ի Տիֆլիս ի 20 ամս. ընկալայ զթուղթ ձեր հանդերձ այլ թղթովք հնազոյն ժամանակաց:

Թերեւս զթուղթան զորս գրեալ առ իս առաքեալ էք յԱխլցխայ՝ աստ ընկալայց ոչ անագան: Գերագատիւ Յօհաննէս Սրբազան Հայր իմ ծանոց ինձ զամենայն նորանոր եղեալս առ ձեզ. այժմ ի գալ գրաֆին Երեւանու աշխատ եղիցուք ի միասին յառաջ անեալ զամենայն եթէ յաջողեցէ Տէր:

Ուրախ եմ եւ փառաւորեմ զԱստուած,